

ԳՐԱԲԱՐԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԱՐԱՂԱԿՈՐ ՔԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԿԱՆ ԱՐԺՈՒՅՈՒ

Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Չայոց լեզվի քերականական համակարգում արժույթի գաղափարն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ակադ. Գ. Բ. Ջահուկյանը՝ քննության նյութ դարձնելով ժամանակակից հայերենի բայի կապակցելիության հնարավորությունները¹։ Ինչ վերաբերում է գրաբարի բայի ուսումնասիրությանը, ապա այս բնագավառում անուրանալի է հատկապես պրոֆեսորներ Ա. Գ. Աբրահամյանի, Գ. Խ. Բարսեղյանի և Ա. Ս. Սարգսյանի դերը, որոնք, սակայն, իրենց արժեքավոր աշխատությունների մեջ բայի արժույթը քննության չեն առել²։

Ներկա աշխատանքում նպատակ ունենք ուսումնասիրել գրաբարի ներգործական սեռի հարադրավոր բայերի խնդրառական արժույթը։

Գրաբարի հարադրավոր բայերը իբրև բառային ինքնուրույն միավորներ, խոսքից դուրս արտահայտում են ներգործական, չեզոք կամ էլ կրավորական սեռի քերականական իմաստ։ Այսպես՝ ի մտի դնել, յինքն արկանել հարադրավոր բայերը ներգործական սեռի քերականական իմաստ են արտահայտում. ամբաստան լինիմ, յայց ելանել բայերը՝ չեզոք սեռի, անարգ լինիմ («անարգվել»), զան ընպել («ծեծվել») բայերը՝ կրավորական սեռի։ Օրինակ՝ Ջանմեղ մարդիկ յինքն արկաներ (Եղիշէ, 64)։ Մի դիցե՛ ի մտի զգժտութիւն (Բուգ., 52)։ Ամբաստան լինեի՛ն քսութեամբ զգօրավարէն Մուշեղէ առ թագաւորին (Բուգ., 166)։ Անարգ եղիցի՛ն (հուն. անարգեսցին - Գ. Խ.) նոքա որպէս ցուր (Սաղմ. Օժ. 8)³։ Քանզի եթէ որդի ուրուք իցէ, զան ոչ ըմպիցէ (Եզնիկ, 82) և այլն։

Գրաբարի ներգործական սեռի հարադրավոր բայերի մեծ մասը պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում է ենթակայի գործողությունն անմիջականորեն իր վրա կրող մի խնդիր, որը հանդես է գալիս տվյալ բայի սեռի քերականական կարգի պահանջով։ Ընդամին, մի շարք ներգործական սեռի հարադրավոր բայեր, սեռի խնդրից բացի, գործություն ունեն պահանջելու կամ ենթադրելու ևս մեկ կամ (որ հազվադեպ է պատահում և) հենց այդ պատճառով գրաբարի համար տիպական չէ երկու բնության խնդիր պայմանավորված այդ բայերի բառիմաստով։ Ըստ խնդրառության արժույթի գրաբարի ներգործական սեռի հարադրավոր բայերը լինում են միարժույթ [Բազում արանց դիակունս կործան յերկիր վարեին (Փարպ., 125)], երկարժույթ [Ձնիզակն յինքն հաներ յարքայէն (Բուգ., 204)] և եռարժույթ⁴։

¹ Տես Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 466-488։

² Տես Ա. Գ. Աբրահամյան, *Բայո ժամանակակից հայերենում*, Գիրք 1, Երևան, 1962։ Գ. Խ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953։ Ա. Ս. Սարգսյան, *Չայերենի հարադիր բայերը*, Երևան, 1966։

³ Աստվածաշնչյան այս և հետագա օրինակները քաղված են Վենետիկի 1860 թ. հրատարակությունից՝ ընդունված համառոտագրությամբ։

⁴ Եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարի բառապաշարի տիպական տարրերից չեն։ Ընտությունը ցույց է տալիս, որ գրաբարի լեզվական աղբյուրներում վկայված են բնդամներ մի քանի եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայեր։ Խնդրառությամբ եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը պարտադիր կերպով պահանջում են մեկ սեռի խնդիր արտահայտված հայցական հոլովածևով, և երկու բնության խնդիրներ, որոնցից առաջինը, որպես կանոն, արտահայտվում է տրական կամ բացառական հոլովածևով, կամ էլ կապական կապակցությամբ։ Ինչ վերաբերում է երրորդ բնության խնդրին, ապա վերջինս արտահայտվում է կամ գործիական հոլովով, կամ էլ կապական կապակցությամբ։ Եռարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերից են պատասխանի տալ, խոստովան լինիմ, ազդ առնել, յուլ առնել, ի բաց պարսպել և այլն։ Օրինակ՝ Ազդ առնեի՛ն նմա (իմմտ. առ Եսայուհ-խոր., 302) մարգարեին (Եզնիկ, 165) գիրսն (Բուգ., 116)։ Ձինչ տայցեմք նմա պատասխանի (Բուգ., 169) զանմննե՛ն (Բուգ., 226)։ Խոստովան եղե՛ն (նմա) վասն անմին իւրոյ, թէ չեմ քրիստոնեայ (Բուգ., 119)։ Չաչս ի բաց պարսպել ի ճառագայթիցս միջոցաւ և այլն։ Եթե նկատի առնենք, որ ա) գրաբարի լեզվական աղբյուրներում եռարժույթ հարադրավոր բայերի երրորդ խնդիրը բոլոր դեպքերում չէ, որ ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում, բ) նշված խնդիրը մյուս երկու խնդիրների հետ միաժամանակ 5-րդ դարի հեղինակների կողմից մինևույն կատույցի մեջ գրեթե չի գործածվում, գ) գործիական հոլովով կամ կապական կապակցությամբ նմանատիպ խնդիրներ կարող են պահանջել նաև խնդրառությամբ միարժույթ բայերը, և վերջապես դ) երրորդ եզր համարվող այդ խնդիրները տվյալ դեպքում պարտադիր և ուժեղ խնդրառության դրսևորում չեն, ապա ղժվար չէ եղարկացնել, որ վերը թվարկված հարադրավոր բայերի եռարժույթ լինելը պայմանական է։

Այս կամ այն հարադրավոր բայի՝ խնդրառության տեսանկյունից միարժույթ, երկարժույթ կամ եռարժույթ լինելը կախված է մի շարք հանգամանքներից:

Այսպես՝ կան այնպիսի բայեր, որոնք անկախ կիրառության դեպքում խնդրառությամբ երկարժույթ են, մինչդեռ, որպես բարդության բաղադրիչ՝ դրանք արդեն երկարժույթ չեն այն պատճառով, որ այդ բայերի արժույթի երկրորդ դրսև որումը արտահայտված է ոչ թե որպես առանձին շարահյուսական միավոր, այլ որպես հենց այդ բայի հարադրի կախյալ բաղադրիչ: Օրինակ՝ «աշխարհագոյժ առնել զերախտիս» (Ոսկ.) կապակցության աշխարհագոյժ առնել-ը չի կարող պահանջել կամ ենթադրել տրականով արտահայտված խնդիր, քանի որ այդ խնդրի քերականական իմաստն արտահայտվել է աշխարհագոյժ բառի առաջին բաղադրիչի միջոցով:

Բազմաթիվ հարադրավոր բայեր էլ խնդրառությամբ երկարժույթ չեն այն պատճառով, որ արժույթի երկրորդ դրսև որումը հանդես է գալիս ոչ թե որպես անկախ կիրառությամբ խնդիր, այլ արդեն որպես հարադրավոր բարդության հարադիր, որն ունի կախյալ կիրառություն: Օրինակ՝ յանգուցանել բայը խնդրառությամբ երկարժույթ է, սակայն հետույալ կիրառության մեջ նրա արժույթներից մեկը կորցրել է իր անկախ կիրառությունը՝ վերածվելով հարադրի՝ Ձմիտս նորա յինքն յանգուցանել (Բուզ., 92) և այլն:

Այս նույն ճանապարհով մի շարք երկարժույթ ներգործական սեռի բայեր, իրենց բացառական հոլովով պահանջած բնության խնդիրների հետ միասին մեկ հարադրավոր բայի վերածվելով, ձեռք են բերում միարժույթ ներգործական սեռի բայի հատկություն՝ պահանջելով կամ ենթադրելով միայն մեկ սեռի խնդիր, ինչպես ի կենաց արկանել զնա (Եսս.), բառնալ զնոսա ի կենաց (Փարպ., 88), յարեւ է ևս արկան զնոսա (Եզնիկ, 144) և այլն:

Բացառական հոլովով բնության խնդիր առնելու զորությունը կորցրել են նաև այն երկարժույթ ներգործական սեռի բայերը, որոնց հարադիրը մի բարդություն է, որի բաղադրիչների միջև ենթադրվում է բացառական հոլովով խնդիր-բայ գերադաս անդամ շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ դիագերծ առնել զվիրաւորս (Բ Մակ., Ը, 27), վաստակաբեկ առնել զթագաւորն (Ազաթ., 104) և այլն⁵:

Ի դեպ, ի ծառայութիւն արկանել և այս սիպի հարադրավոր բայերի բայական բաղադրիչները նախապես եղել են եռարժույթ և միայն հարադրի հետ համաձուլումից հետո են դարձել երկարժույթ, ինչպես՝ Դուք անձամբ զանձինս այլում ի ծառայութիւն արկանէիք (Եղիշէ, 56):

Ա. Միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարում պարտադիր կերպով ենթադրում [ինչպես՝ Ի չքմեղս լինելով չլուելոյն առնէր (Բուզ., 184)] կամ պահանջում են մեկ սեռի խնդիր, որը սովորաբար արտահայտվում է հայցական հոլովածևով: Օրինակ՝ Ձոր և ոչ նոքա յայտնի կարեն առնել (Ազաթ., 228): Առ ի յամօթ առնելոյ զվատաքցեալան (Եզնիկ, 58) և այլն:

Այս բարդությունների պահանջած սեռի խնդիրը կարող է արտահայտված լինել նաև «հայցական հոլովով բառածեւ-բացառական հոլովով բառածեւ» մասնակաղապարով, որտեղ բաղադրիչները ցույց են տալիս, համապատասխանաբար, մասի և ամբողջի հարաբերություն: Օրինակ՝ Ջբազումս ի նոցանէ զլխով պատուհաս առնէր Մուշեղ (Բուզ., 117): Յերկիր արկանէր արս ի մանկանցն Վաղարշակայ (Խոր., 107) և այլն:

Սեռի խնդրի քերականական իմաստ է արտահայտում նաև բացառական հոլովածևով արտահայտված անդամը՝ միայնակ: Այս դեպքում ամբողջի քերականական

⁵ Սրանց հետ չպետք է շփոթել այն հարադրավոր բարդությունները, որոնց հարադրի բաղադրիչների միջև առկա է ելման տեղի պարագա-բայ գերադաս անդամ շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ քարաւծ(ս) առնել զամենեսնան (Ոսկ.), գետավլծ առնել զնոսա ի Տափերական կամրջացն (Ազաթ., 23), գահավլծ առնել զնոսա ի ծայրից բարձրավանդակին (Բ Մնաց., ԻԵ, 12), դարախոս առնել զդի (Ոսկ.) և այլն:

իմաստն ունի բառային արտահայտություն, իսկ մասնականության քերականական իմաստը՝ ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանից: Օրինակ՝ Յորդուց քոց առնիցեն կուրտ (Ոսկ.):

Ներգործական սեռի հարադրավոր բայերի պահանջած սեռի խնդիրն արտահայտվում է նաև սեռական հոլովով հավելարդությամբ, որտեղ ընդգրկված բառածևերը հոմանիշ կամ համանիշ գույգեր են, ինչպես՝ Աղմուկ շփոթի ի մէջ արկանէին (Խոր., 32): Պատուհաս տանջանաց ի վերայ եղաք (Ագաթ., 87) և այլն:

Հարկ է նշել, որ որոշ կառույցների սեռի խնդիրն արտահայտվում է նաև անձն բառի գործիական և հայցական հոլովածևերի հարադրությամբ, ինչպես՝ Անձամբ գանձինս արարէք ժառանգ գեհեննին (Եղիշէ, 55) և այլն:

5-րդ դարի լեզվական աղբյուրներում միարժույթ հարադրավոր բայերի պահանջով առկա են սեռի խնդիրներ՝ արտահայտված ոչ թե բառածևով, այլ մի ամբողջ երկրորդական նախադասությամբ, ինչպես՝ Ոչ ածելով զմտաւ, թէ խաբէութեամբ դիւաց երկրպագին պատկէրք (Խոր., 272): Բայց որդին եցոյց և յայտնի արար, թէ «Որ ետես զիս, ետես զՀայր իմ» (Ագաթ., 191) և այլն:

Միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը սեռի խնդիրն զուգահեռ չեն կարող պահանջել կամ ենթադրել որևէ այլ խնդիր կամ խնդիրներ. հակառակ դեպքում այդ բայերը կդիտվեն երկարժույթ կամ եռարժույթ: Սակայն բացառված չէ, որ մի շարք ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայեր սեռի խնդրի փոխարեն պահանջեն վերջինիս փոփոխակը, որն արդեն ոչ թե սեռի, այլ բնության խնդիր է՝ արտահայտված նախդրավոր կապակցությամբ, ինչպես՝ Յորժամ զմտաւ ածեր Տիգրան յաղագս քեռն (հմմտ. զքոյր-Գ. Խ.) (Խոր., 81): Պետրոս զմտաւ ածեր վասն տեսլեանն (հմմտ. զտեսիլն-Գ. Խ.) (Գործ., Ժ, 19): Քանզի և զմտաւ ածել զԳնանէ (հմմտ. զճա-Գ. Խ.) կատարեալ իմաստութիւն է (Իմաստ., 2, 16) և այլն:

Ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայերը բառիմաստային, կապակցելիության հնարավորությունների և այլ տեսանկյուններից միատարր չեն:

Մի շարք միարժույթ բարդություններ, սեռի խնդրից բացի, կարող են պահանջել նաև մի բնության խնդիր՝ արտահայտված գործիական հոլովով, ինչպես՝ սովովն և ախտին լիզաջինջ առնել զագզս (Եւս.), յանդիման բերել լեզուաւ զծածուկս (Խոր., 91), ափիբերան արա զնոսա հրամանօքն Քրիստոսի (Ոսկ.) և այլն:

Պետք է նկատել, սակայն, որ գործիականով բնության խնդիր պահանջելը նշված հարադրավոր բայերի էական հատկանիշներից չէ: Լեզվական փաստերը վկայում են, որ գործիականով խնդիր կարող են պահանջել նաև գրեթե բոլոր մյուս միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը, սակայն այդ խնդիրները ոչ թե մշտապես ենթադրվում են՝ պայմանավորված տվյալ բայերի բովանդակության պլանով, այլ կիրառվում են ըստ խոսքաշարում առաջացած անհրաժեշտության: Հենց այս հանգամանքն էլ ցույց է տալիս, որ գործիական հոլովով խնդիրները հիշյալ բայերի համար պարտադիր չեն, արժույթի տեսանկյունից էլ կարևորություն չեն ներկայացնում:

Գործիական հոլովով բնության խնդիր չեն պահանջում այն միարժույթ հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ինքը մի բարդություն է, որի բաղադրիչների միջև առկա է գործիական հոլովով խնդիր-բայ գերադաս անդամ շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ ձիախալած առնել (Բուզ., 127), հրակեզ առնել (Եղիշէ, 66), մտայոյզ առնել (Ղան., Բ, 29), ջերմակիծ առնել (Ագաթ., 228) և այլն:

Այսուհանդերձ, նշված տեսակի որոշ հարադրավոր բայեր կարող են պահանջել գործիական հոլովածևով արտահայտված բնության խնդիր և ս. սա այն դեպքում, երբ հարադրով արտահայտված միջոցի խնդրային զաղափարը մղվում է երկրորդ պլան, ինչպես՝ Սպարափակ առնել երիզացօքն (ՆՅԲ-ում՝ երիզացուվքն - Գ. Խ.) զտեղի կռուոյն (Փարպ., 150):

Որոշ հարադրավոր բայերի գործիականով բնության խնդիրը խոսքի մեջ բացակայում է ոչ թե նախապես նշված լինելու պատճառով, այլ քանի որ խոսքից դուրս անգամ միարժեք կերպով ենթադրվում է տվյալ բայի բովանդակության պլանից: Օրինակ՝

Կիսախողխող աճել բայի համար գործիականով խնդիր է ենթադրվում սրով բառածևը, ուստի վերջինս իմաստային տեսանկյունից դառնում է անկարևոր և, հետևաբար, չի հիշատակվում, ինչպես՝ Կիսախողխող զքարշողսն առնէին (Խոր., 296): Այդպիսի բայերից են նաև՝ կոխան արկանել, բուռն հարկանել և այլն: Օրինակ՝ կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք (Եզնիկ, 58): Բուռն հարկանիցեն զդրօշակ (Ագաթ., 230) և այլն:

Անշուշտ, նշված և այս տիպի բայերը խնդրառությամբ ոչ թե միարժույթ, այլ երկարժույթ են, փաստ, որի օգտին խոսում են այն նախադասությունները, որոնցում ենթադրվող միջոցի գործիականն ունի բառային արտահայտություն և ճշգրտում է գործողության կատարման միջոցը: Օրինակ՝ Կես դիմաց նորա ի վայր բերէր սուսերաւ (Խոր., 172): Երգէին նմա բուռն հարկանել զործաքար⁶ վիմաց ձեռօք (Խոր., 115) և այլն:

Գործիականով բնության խնդիր չեն կարող պահանջել կամ ենթադրել նաև գործիական հոլովով արտահայտված հարադիր ունեցող բարդությունները, ինչպես՝ Չկայտակերտն հրով դատել (Գ Մակ., Ե, 23): Որ կարող իցէ դնել գրով բանս դիմադարծութեան (Բուզ., 85):

Միշտ չէ, սակայն, որ խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի հետ կիրառվում է որևէ բնության խնդիր, թեկուզ այն տվյալ բայերի համար արժույթի տեսանկյունից կարևորություն չներկայացնի: Մի շարք միարժույթ հարադիր բայեր գրաբարի լեզվական աղբյուրներում չունեն ու չեն ենթադրում բնության խնդիր և հանդես են գալիս միայն սեռի խնդրի հետ կապակցության մեջ: Այդ բայերից են՝ աւար առնուլ, յաւարի առնուլ, յաղերս խոնարհեցուցանել, ի բանի առնել, ի բաց թողուլ և այլն: Օրինակ՝ Աւար առեալ զերկիր (Խոր., 203): Յաւարի զամենայն երկիրն առեալ (Խոր., 234): Կատարեաց ի գլուխ եհան զայս ամենայն (Բուզ., 50): Ի բաց թողէր պղծութեան պաշտամունսդ (Ագաթ., 121): Ձիայրն խոնարհեցուցանէ յաղերս (Սեբեթ.,) և այլն:

Որոշ ներգործական սեռի միարժույթ հարադրավոր բայեր պահանջում են միջնորդական կառավարմամբ բնության խնդիրներ, որոնք չեն բխում այդ բայերի բովանդակության պլանից, ուստի և պարտադիր կառավարման արտահայտություններ չեն: Օրինակ՝ բազմապատիկ արասցէ զքեզ քան գհարս (Բ Օրեն., Լ, 5): Ձմոզպետն ընդ նոսա ի համար արկանել (Եղիշէ, 78): Չայս վասն հասարոցն ծայրաքաղ արարեալ (Խոր., 158) և այլն:

Բ. Խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարում մեծ թիվ չեն կազմում:

Դրանք բոլորն, իբրև կանոն, զորություն ունեն պահանջելու մի սեռի և մի բնության խնդիր:

Չատկանշական է, որ սեռի խնդիր պահանջելու տեսանկյունից, խնդրառությամբ երկարժույթ հարադրավոր բայերը խիստ միատարր են. դրանք պահանջում կամ ենթադրում են ուղիղ խնդիր, որի հիմնական արտահայտչամիջոցը հայցական հոլովածու է, ինչպես՝ Ձորս հնազանդ իւր արարեալ Չայկ (Խոր., 33): Չնիզակն յինքն հաներ յարքայէն (Բուզ., 204): Արծանի առնել զմեզ յախտեճական պատուոյն (Փարպ., 100):

Չայցական հոլովից բացի՝ խնդրառությամբ երկարժույթ բայերի սեռի խնդիրը

⁶ Բուռն հարկանել-ի համար առավել տիպական է «2+ բացառական հոլովածուով կապվող բառածև» կապակցությամբ լրացումը, որը, փաստորեն, ոչ թե բնության խնդիր է, այլ սեռի խնդրի իմաստային տարբերակ մասնական ուղիղ խնդիր: Օրինակ՝ Սատուցեալ բուռն հարկանել զթագաւորէն (Բուզ., 101): Չայսպիսոյ մեծէ իրէ բուռն հարկանել (Խոր., 11) և այլն: Միաժամանակ պետք է նշել, որ «ձեռնամուխ լինել» իմաստի դեպքում բուռն հարկանել բայը հանդես է բերում կրկնասեռություն՝ պահանջելով չեզոք սեռի բայերին հատուկ բնության խնդիր՝ արտահայտված սրական հոլովով: Օրինակ՝ Որոյ և ծախող իրացն իսկ բուռն հարեալ էր նորա (Եղիշէ, 88):

կարող է արտահայտվել նաև մի երկրորդական նախադասությամբ, ինչպես՝ Յուշ առ-
նելով (թագաւորին, մեծամեծացն եւ ամենեցուն - Գ. Խ.), զի եւ նոցա Տր գոյ յերկինս
(Բուգ., 65): Որով յայտ արար, եթէ ոչ հակառակ օրինացն ուսուցանէր (Եզնիկ, 278) և
այլն:

Հազվադեպ սեռի խնդիրը կարող է արտահայտվել նաև բաղադրյալ կապակցու-
թյամբ՝ «ԱՆՁՆ բառի եզակի գործիական հոլովածու - ԱՆՁՆ բառի հոգնակի հայցական
հոլովածու» մասնակաղապարով, ինչպես՝ Դուք անծամբ զանծինս այլում ի ծառայու-
թիւն արկանիք (Եղիշէ, 56):

Բովանդակության պլանում ենթադրվելու պատճառով որոշ կառույցների սեռի
խնդիրը կարող է բառային արտահայտություն չունենալ, ինչպես՝ Ձսուրբ հաւատ ուխ-
տին մերոյ մատնեալ ծաղր ետուք առնել անօրինացն (Փարպ., 27): Ի բաց բառնալ
(զԱրտաշէս - Գ. Խ.) ի թագաւորութենէ այտի (Փարպ., 20) և այլն:

Ներգործական սեռի երկարժույթ որոշ բայեր էլ (յայտ առնել, հարցումն առնել,
ծանուցումն առնել և այլն) անմիջական կառավարմամբ կապակցվող սեռի խնդրի փո-
խարեն գորություն ունեն պահանջելու միջնորդական կառավարմամբ կապակցվող
բնության խնդիր, որը կարող է արտահայտվել այնպիսի կապական կապակցություն-
ներով, ինչպիսիք են «Ձ + բացառական հոլովով կապվող բառածու», «ՎԱՍՆ - սեռա-
կան հոլովով կապվող բառածու», «ԱԿԱ - սեռական հոլովով կապվող բառածու» և
այլն: Հմտ. Ձոր Տէրն իսկ յայտ արար (Եզնիկ, 179) և Այնու գօրոյս յայտ առնէ (Եզնիկ,
90): Խորհրդակցաց անդուլ հարցումն առնել վասն այսպիսւոյ պատճառի (Խոր., 74):
Ձի մարզպանք պարսիկք մի կարասցեն ծանուցումն սակս այնր առնելով ինչ՝ գերա-
զանցօրէն փոփոխել ըստ կամաց իւրեանց (Խոր., 352) և այլն:

Ինչ վերաբերում է երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի բնու-
թյան խնդրին, ապա վերջինս արտահայտվում է տարբեր միջոցներով: Այս հանգաման-
քը պայմանավորված է ներգործական սեռի բայերի բառային իմաստով: Այսպես՝ թեև
յանձն առնել և ի բաց հանել հարադրավոր բայերը երկուսն էլ ներգործական սեռի են
և խնդրառությամբ էլ՝ երկարժույթ, սակայն, կախված բառիմաստից, դրանցից մեկը
պահանջում է տրականով արտահայտված բնության խնդիր, մյուսը՝ բացառականով:
Հմտ. Ձիրս նմա յանձն առնէր (Փարպ., 73) և Թագաւորն Արշակ զսուսերն ի բաց հա-
նէր ի նմանէ (Բուգ., 59):

Խնդրառու գերադաս անդամի հետ բնության խնդիրները կապակցվում են երկու
եղանակով՝ ա) անմիջական կառավարմամբ և բ) միջնորդական կառավարմամբ:

Անմիջական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրները կարող են ար-
տահայտվել տրական, բացառական և գործիական հոլովներով⁷: Օրինակ՝ Ձբանս հա-
ւատարիմ առնէր նմա (Բուգ., 108): Ի բաց դարձուցանել զնոսա յիրացն (Փարպ., 22,
113): Ակնարկի առնէին յիս աջօք (Սաղմ., ԼԴ, 19)⁸ և այլն:

Միջնորդական կառավարմամբ կապակցվող բնության խնդիրներն արտահայտ-
վում են կապական կապակցություններով: Օրինակ՝ Ժաման առնել զնա յօրինութիւն
(Սաղմ., Ի, 4) և այլն:

Երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի պահանջած բնության
խնդիրը կարող է արտահայտվել նաև այլ միջոցներով, որոնք 5-րդ դարի գրաբարի հա-
մար առանձնապես տիպական չեն: Դրանցից է, օրինակ, բնության խնդիր-բացառական
հոլովով բաղադրիչ կապակցությունը, որտեղ բաղադրիչների միջև առկա է մասի և
ամբողջի հարաբերություն: Օրինակ՝ Ոչ ետ թոյլ և ոչ միում ի նոցանէ պաշտել զնա
(Եզնիկ, 246) և այլն:

⁷ Անշուշտ, այս տեսանկյունից բացառություն են կազմում անորոշ դերբայների ուղիղ ձևե-
րով արտահայտված բնության խնդիրները, որոնք գերադաս անդամի թելադրանքով այս կամ այն
հոլովածնով արտահայտվելու, կառավարվելու փոխարեն կապակցվում են առդրության եղանա-
կով: Օրինակ՝ Ձայս կրել (փոխ. կրելոյ - Գ. Խ.) արժանի արարեր զիս (Ագաթ., 59):

⁸ Ձևական միջոցի խնդիր է:

Յանձն առնել, տեղեակ առնել, գոյժ առնել, լսելի առնել և այլ հարադրավոր բայեր անմիջական կառավարմամբ բնության խնդիրների փոխարեն կարող են պահանջել միջնորդական կառավարմամբ բնության խնդիրներ, որոնք նախորդների հետ կազմում են շարահյուսական հոմանշային դաշտ: Հմմտ. Նմա յանձն առնել գՀայս (հոր., 277) և Ի ձեռս⁹ քո յանձն առնեմ զհոգի իմ (Կորին., 88): Այս ամենայնի զնոսա տեղեակ առնել (Եղիշէ, 86) և՛ Տեղեակ ևս առնել զնա վասն խրամատութեան պահակին Յոնաց (Եղիշէ, 142) և այլն:

Որոշ կառույցների մեջ բնության խնդրի փոխարեն կիրառված է վերջինիս քերականական նշանակության հետ առնչվող պարագա: Հմմտ. Գոյժ արկանել նմա զիրոյ առնն տարապարտ կորուստն (Բուզ., 100) և՛ Գոյժ արկանել յեզիպտոս (Երեմ., Խ2, 14) և այլն:

Այսպես բնության խնդրի փոխարեն պարտադիր տեղի պարագա են պահանջում կամ ենթադրում նաև բացառական հոլովով բնության խնդիր պահանջող մի շարք բայեր, ինչպես՝ յինքն արկանել, ի բաց որոշել և այլն: Օրինակ՝ Որոշեցին ի բաց զամենայն խառնեալսն յԻսրայէլէ (Նէեմի, ԺԳ, 3): Կամի այսրէն յինքն արկանել զնա (Ազաթ., 148):

Եզվական փաստերը վկայում են, որ բնության խնդիրը ևս, ինչպես սեռի խնդիրը, միշտ չէ, որ բառային արտահայտություն ունի: Խոսքային որոշ իրադրությունների մեջ նշված խնդիրը երբեմն բացակայում է հասկանալի լինելու, անկարևորության կամ այլ պատճառով: Օրինակ՝ Գոյժ առնել զանհնարին կործանումն (Բուզ., 17): Պատմեցէ՞ք յազգս եւ լու՛ արարէք, թէ «Առա Բաբելոն, յամօք եղեւ Բէլ» (Երեմ., Ծ, 2) և այլն:

Ըստ տարբեր արտահայտության պլաններ ունեցող բնության խնդիր պահանջելու զորության՝ խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերը բաժանվում են մի քանի խմբի.

1. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, որպես արժույթի պարտադիր եզր պահանջում կամ ենթադրում են նաև մի բնության խնդիր՝ արտահայտված տրական հոլովով: Այդ բայերից են յայպս տալ, յանձն առնուլ¹⁰, յանձն առնել, բան տալ, զիտաց առնել, զիտուն առնել, գոյժ արկանել, հնազանդ առնել, մատն առնել, յանդիման առնել, յանօթ տալ, յաշտ առնել, շնորհս առնել, պատուէր տալ, ի վայր տալ, ի վարձու տալ, ի վերայ դնել, ի վեր հանել, տեղեակ առնել, տե սիլ առնել և այլն: Օրինակ՝ Մի՛ տար զեկեղեցի քո յայպս կատականաց անօրէն իշխանիս (Եղիշէ, 49): Չմնացեալսն յանձն առնել շնորհացն Աստուծոյ (Կորին., 92): Դներ նմա անուն Ռոմիզդ (Եզնիկ, 123): Ջքեզ ապաւն ինձ արարի (Սաղմ., ԾԽԳ, 2) և այլն:

2. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պահանջում կամ ենթադրում են մի բնության խնդիր՝ արտահայտված բացառական հոլովով: Այդ բայերից են՝ ազատ առնել, ամրաժածուկ առնել, անաբատ առնել, անմարդի կացուցանել, անքակ առնել, արմատակից առնել, բարձր առնել, ի բաց քերել, բուռն հարկանել, դողումն կալնուլ, ի դուրս կորզել, յերաշխի առնուլ, յերկբայս առնել, թափուր կացուցանել, սուրբ առնել, փոխ առնուլ, քաղախան առնել, քաղ հանել և այլն: Օրինակ՝ Ազատ առնել զնա ի կասկածանաց (Եզնիկ, 137): Անարատ արար զիս ի հալածչաց (Երեմ., ԺԱ, 15): Ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս, Տէ՛ր (Սաղմ., ԺԸ, 13) և այլն:

3. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են նաև, մի բնության խնդիր՝ արտահայտված գործիական հոլովածևով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գործիական հոլովածևով պարտադիր բնության խնդիր պահանջող երկարժույթ հարադրավոր բայերի թիվը գրաբարում նկատելիորեն սակավ է, ինչպես՝ լի առնել, ի մէջ փակել և այլն: Օրինակ՝ Չօրօքն զնա ի մէջ փակէր (Եղիշէ, 118): Լցին զգօրսն խռովութեամբ եւ լի արարին ահիւ եւ գողութեամբ (Գ Մակ., Զ, 15) և այլն:

⁹ Դազար Փարսեցու «Հայոց պատմության» մեջ (էջ 101) կիրառվել է նաև ի ձեռն եզակի տարբերակը:

¹⁰ Բայս բազմիմաստ է, որի հետևանքով ձեռք է բերել կրկնասեռ բայի հատկություն: Հմմտ. Զբլապատութիւն առ յանձն (Ազաթ., 207) և՛ Ապա չատնոյր զայն նմա յանձն Տերէնտն գօրակարն Յունաց (Բուզ., 162):

4. Բայեր, որոնք, սեռի խնդրից բացի, պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են նաև մի բնության խնդիր արտահայտված նախդրավոր կապակցությամբ: Հարկ է նշել, որ նախդրավոր կապակցությամբ բնության խնդիրները հանդես են գալիս տարբեր արտահայտչամիջոցներով, որոնցից են հետևյալ կապակցությունները.

ա) «ԱՌ - սեռական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Սօս ուներ առ իր զիմաստունս (Փարս., 161):

բ) «ԱՌ - տրական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Ասուն արար Աստուած իմ առ ձեզ (Բ Կոր., ԺԲ, 21):

գ) «ԱՌ - հայցական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Զածնեայն մարդ պատրաստական առ բանն Աստոծոյ առնէր (Բուզ., 65):

դ) «Զ+գործիական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Շուրջ արկանել զայն զոտիւք (Առակ., ԻԹ, 6):

ե) «ԸՆԴ-տրական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Ուխտ զայս դներ ընդ ամենայն մարդոյ (Ազաթ., 448):

զ) «ԸՆԴ-հայցական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Ատեաց Արշակ ամենայն ուխտին, զոր եղ ընդ նախարարսն (Խոր., 294): Ընդ վարդապետս օրինաց բանս ի կիր արկեալ էր (Ազաթ., 202) և այլն:

է) «Ի(յ) - (+) հայցական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ ՅԱստուած ապաստան առնէին զկեանս առնն հաւատացելոյ (Եղիշէ, 156): Աշխատ արարի քեզ ի ծախս (Ես., ԽԳ, 23):

ը) «ՎԱՍՍ-սեռական հոլովով արտահայտված կապվող բառածու», ինչպես՝ Տեղեակ եւս առնէր զնա վասն խրատատութեան պահակին Հոնաց (Եղիշէ, 142): Գիտակ արարին զթագաւորն վասն սրբոյն (Ազաթ., 449) և այլն:

Իբրև ասվածի ամփոփում նշենք հետևյալը.

1. Գրաբարի ներգործական սեռի հարադրավոր բայերը պարտադիր կերպով պահանջում կամ ենթադրում են մի սեռի խնդիր, որի առկայությունը պայմանավորված է սեռի քերականական կարգով: Այդ բայերը խնդրառությամբ լինում են՝ ա) միարժույթ, բ) երկարժույթ և գ) եռարժույթ, որոնցից վերջին տեսակը գրաբարի համար տիպական է:

2. Որոշ բայեր, սեռի խնդրառությունից բացի, օժտված են նաև մեկ կամ երկու բնության խնդիր պահանջելու կամ ենթադրելու հատկությամբ՝ կախված տվյալ բայի բառիմաստի առանձնահատկությունից:

3. Սեռի խնդիր պահանջելու հատկությամբ ներգործական սեռի հարադրավոր բայերը էապես տարբերվում են չեզոք սեռի հարադրավոր բայերից, որոնք նշված տեսանկյունից արժույթագուրկ են:

4. Նախադասության մեջ որևէ ներգործական սեռի բայի կիրառումն ինքնին ենթադրում է առնվազն մեկ այլ անդամի (շարահյուսորեն՝ ուղիղ խնդիր) կիրառման անհրաժեշտություն, որով նոր միայն ամբողջանում է տվյալ նախադասության միջոցով արտահայտվող իմաստը:

5. Ներգործական սեռի հարադրավոր բայերը գրաբարի բառապաշարում մեծ թիվ են կազմում, իսկ դրանք մի մասն աչքի է ընկնում գործառական բարձր հաճախականությամբ: Վերջին հանգամանքը պատումին հաղորդում է ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ կենդանություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազաթ. - Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909:

Բուզ. - Փատտոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզնիկ - Եզնկայ Կողբացւոյ եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր. - Սովխիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913:

Կորիւն - Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941:

Ոսկ. - Յովհաննու Ոսկերբանի Յար Մատթոս, հ. 1-3, Վենետիկ, 1767:

Փարս. - Ղազարայ Փարսեցւոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904:

Г. К. Хачатрян – Проявление валентности по управлению у составных глаголов действительного залога древнеармянского языка. – Проявление валентности по управлению у составных глаголов действительного залога древнеармянского языка до сих пор не изучено. Исследование этих глаголов свидетельствует о том, что по управлению эти глаголы могут быть одновалентными, двувалентными и трехвалентными. Наличие последних автор допускает чисто теоретически. Как правило, одновалентные составные глаголы действительного залога в обязательном порядке требуют только одно дополнение, причем прямое, выраженное винительным падежом, а двувалентные составные глаголы действительного залога – одно прямое дополнение и одно косвенное, выраженное дательным падежом или облативом (отложительным падежом), а также предложным сочетанием.